

## Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Տարիներ առաջ իմ «Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Ս. Երկրին մէջ» խորագրով աշխատասիրութեան պրպտումներուն առթիւ յանախակի կը հանդիպէի Ս. Երկրի Սրբավայրերու աւանդութեանց գրուածքներու. նոյն գործիս սպագրութենէն յետոյ ձեռնարկեցի հաւաքել նոյն գրուածքները, որոնց հաւաքումը եւ խմբագրութիւնը տեսց 4-5 տարիներ: Ուրիշ փրփսոնեայ համայնքներու կամ Ս. Տեղեաց պատմութեան մասնագէտներու մօտ չկրցի գտնել համանման աշխատութիւն մը, բացի Alphonse Couret-ի Ս. Գերեզմանի մասին գրի առած աշխատութենէն (1894), որուն մէկ մասը միայն կարելու էր: Ս. Երկրի գլխաւորապէս Երուսաղէմի աստուածակոյ Տեղերու մէջ մեր Փրկչին ապրեցաւ, հրաշագործեց ու մարդոց հաղորդեց իր երկնաւոր պատգամները ու կատարեց իր *Տնօրինական* գործերը: Աւետարանիչներուն ծանօթագրութեանց համաձայն, հաստատուած են Քրիստոսի տնօրինական Ս. Տեղերը: Ճշմարիտ փրփսոնեան ու Ս. Աւետարանի հետեւող մը չի կրնար տարակուսիլ փրփսոսակոյ Ս. Տեղեաց նոյնութեան՝ ըսկրսեալ այն հրաշալի օրերէն երբ Տէրն մեր կատարելաբար գործեց իր աստուածային տնօրինական գործերը՝ մարդոց փրկութեան համար:

Սրբավայրերու Տեղեաց հաստատութեան մասնաւորումէն զատ՝ ծանօթ է փրփսոնեայ աշխարհին քե, Գ. դարուն Կոստանդիանոս եւ իր մայրը Ս. Հեղինէ մեծ ջերմեռանդութեամբ Փրկչին տնօրինական Ս. Տեղեաց վրայ հիմնարկեցին հոյակապ եկեղեցիներ. Քրիստոսի յաղթական Գերեզմանին, Գողգոթայի եւ Բերդեհեմի Ս. Ծննդեան Այրին ու Համբարձման լեռան վրայ կը տո-